


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տրեւելն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օս աւ երկիրներ տարեկան Գրանց 25
» » վեցամսեայ » 14
Թղթ ուսարի ծախքը խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նամակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԴԵՄԻ ՄԱՐԴԵՐՆԻՍ

Մամուլը կառնէ կոր եւրոպայի: Չեւրոպայի թուրքիոյ վրայ գնեւէ յետոյ՝ Գերմանիա հիմա կը դառնայ Չինաստանի, ու շատ չանցած ոտքին ամուր կուտան մը կը չինէ Ծայրագոյն-Արեւելքի մէջ ալ: Արդէն սկսած է խօսուիլ անգլիական, ֆրանսական եւ ռուսական նիզակահայութեան մը հաւանականութեանը վրայ, Գերմանիոյ ամենազօրութեան դէմ՝ ամբարտակ բարձրացնելու ծրագրով: Այս խորհուրդները վերջով կացութեան մը իբր յայտարար նշաններն համարելով, թողունք Ծայրագոյն-Արեւելքը ու քիչ մը դադարէ մեր արեւելքովը որ Գերմանիոյ հովանաւորութեան տակ կը յետադարձ իր քաղաքական կեանքին մէջ, եւ մենք աւելի՛ եւրոպայի կը տագնապէ:

Ատենէ մը ի վեր ազդուելի թմբուկը Պրանսայի կառավարական մամուլն է որ զարնել կ'սկսի. «Թուրքիան ձեռքբերուա կը թուի» կաղաղակեն. «քիչ մը ուշ չէ» եւ «ուխտագնացութեան» պարզ հաւանականութիւն մը քաղաքական տեսութիւններու նոր հորիզոններ կը բանայ: Կերեւի թէ Վիլհելմ կայսրը իր կնկանը հետ մօտերս Երուսաղէմ երթալու դիտարկութիւն ունի, եւ ահա Ֆիկառօի նախկին դիւանագետ աշխատակիցը, Վիլթ, յաւած սրտով կը յայտարարէ թէ եւրոպայանկարող է արդիւնէ կայսերական ուղեւորութիւնը դէպ ի Պաղեստին: Գաղաքական աւանդութիւնները հարկ է եղեր որ թող չի տային Գերմանիոյ կայսեր «հաճի» կարենալ կոչուելու հաւանականութիւնը:

«Ատեն մը, ըստ Վիլթի, եւրոպական քաղաքականութեան համար կենսական կառուցութիւն ունեցող խնդիր մըն էր վեհապետի մը Պաղեստին այցելութիւնը: Երբ 1869ին Պրանսայի կայսրուհին Եգիպտոս գնաց Սիւէզի ջրանցքին բացման առթիւ, փափագեցաւ Երուսաղէմ անցնիլ. սակայն «պետական հարկը» պարտաւորեց զինքը հրաժարիլ այդ խորհուրդէն որուն իրականացումը պիտի կրնար վերջով եւրոպայի խաղաղութիւնը»: Արդի աւարդեւելու խտրականութիւնը շատ մըն է Պրանսայի համար՝ արեւելքի մէջ եւրոպայի անշուրտութեանը ու Գերմանիոյ ամենազօրութեանը:

Թուրքիան իր հովանիին ներքեւ առած՝ Գերմանիա կարող կըլլայ տիրել արեւելքի, ու ոչ ոք ճիշդ մը հանելու կը համարձակի տալ:

Կաւին: Պոլիս, կրսէ Ֆիկառօ, միշտ պետութիւն մը ամենաազդեցիկ կըլլար, եւ Սուլթանները անխուսափելի հարկին առջեւ առնեն մը դուրս ծռելէ ետք՝ կը ջանային թօթափել վրանին ծանրացող լուծը. սակայն հիմա, ընդհակառակը, գերմանական լուծը շատ քաղցր կերեւի եւ Սուլթանը իր բոլոր ուժով անոր կը փարի:

Մէկ տարուան միջոցին ամեն օր թուրքիոյ կործանումը մօտալուտ գուշակուեցաւ. եւ սակայն ամեն ատենէ աւելի այսօր է որ թուրքիոյ երկարակեցութեանը հաւանականութիւն կայ, վաճառի Գերմանիոյ մէկ նահանգը կսկսի ըլլալ: Վիլհելմ կայսրը Սուլթանին կուտայ իր պաշտօնատարներն ու զինուորականները, իր պաշտպանութիւնը, եւ մէկտեղ ալ իր հպատակները: Գերմանիոյ համար թուրքիա շահագործութեան անսպառ հանք մըն է: Բայց ի՞նչ պիտի ըսէ եւրոպա:

Չենք գիտեր թէ վաղուան ի՞նչ վերապահում է. սակայն երբ Պրանսայի պէս երկիր մը կը մտնէ թուրքիոյ քաղաքական փոփոխութեան կարեւորութիւնը եւ կսկսի լրջաբար մտահոգութեան մէջ իյնալ, աւելորդ յոգնութիւն է հայ ժողովուրդին համար՝ խորհիլ Գերմանիոյ վրայ, նկատողութեան առնել գերմանական շահերն ու տեսութիւնները, եւ մանաւանդ ճանշնալ Վիլհելմ Բ-ին ի՞նչ ըլլալը: Երեւմ թուրքիոյ մէջ կըսուէր. «Թագաւորէն վեր Աստուած կայ», հիմայ կարելի է ըսել «Թագաւորէն վեր Վիլհելմ կայ», գոնէ որչափ որ մեզի պէտք է ճանշնալ այդ «վերինը»:

Կ. Պոլսոյ ջարդին յաջորդ օրը Գերմանիոյ կայսրը իր կենդանագիրը Սուլթանին նուիրեց. «ձեռքդ դալար» ըսելու պէս բան մը. տմարդի գործ, բայց յանդուգն գործ. քրիստոնէական եւ մարդասիրական զգայուններու դէմ բացերն բողոքելու համարձակութիւնը ամեն քրիստոնեայ կայսր չի կրնար ունենալ. բայց Վիլհելմ բռնապետներու «աստուածատուր իրաւունքը» կը համարի ուսմբին պայթիւնը արեւելի մէջ մարեցնելու վայրագութիւնը. ու իր այս գաւառանքն ալ կը քարոզէ: —Ահա դէմի մարդերնիս:

ՊԱՏՈՒԵԼԻՆ

Աթէնքի մէջ ճանչցայ զինքը տարիուկէս առաջ, երբ օգոստոսի դէպքերէն ետքը Պոլսոյ ձգեցին: Խոնարհ, համեստ, անուշ ընտելութեամբ մարդ մը, յոգնած դէմքով, թէեւ հազիւ երեսուն տարեկան:

Ամենուն ծանօթ էր իր Պատուելի անունովը եւ ամէնքը կանխաձեռն իրմէ: Չեմ գիտեր ի՞նչ տեսակ հով մը կար վրան որ համակրութիւն ու յարգանք կը ներշնչէր իրեն մօտեցողին: Յեղափոխական ճանչցուած անձերու խմբի մը մէջ տեսած էի այդ հանդարտիկ մարդը. անոնց տունը կը կենար ուսնոց հետ կը ճաշէր: Եւ սակայն օր մը թուրքին դէմ հայհոյանք մը չէի լսած բերնէն, ապաւ երկրի մէջ յեղափոխականի այդ յայտարար նշանը, ու այս բանը դարձանք ու հետաքրքրութիւնս կը շարժէր:

Որ մը հարցուցի անոնցմէ մէկուն. —Պատուելի ի՞նչ գործ ունի ձեր խմբին հետ: —Պատուելի, պատասխանեց խօսակցիս որ լուսնի յիշեր թէ նախկին գործիչ, հերոս թէ տէրոր էր, բայց ան ալ յեղափոխական է, մահուան դատաւարարուած ու արտասահման փախած: Յետոյ խորհրդաւոր ձայնով մը ունեցուց. —Հաճի Գալուստ Արիանեսանի խմբին է:

* * *

Ամիսներէ ի վեր, ամէն օր, իրեն հետ էի եւ մտերմօրէն կը տեսնուէի ու օր մը անկարկութիւն չէր ըրած իր անցեալ կեանքին, թէեւ այդ կեանքը ընցուն էր ամբողջ զիւրացնելու թեմար մը:

Պատուելի Բիւզանդ ֆափագեան, կամ բուն անունով Նշան Գէշիշեան, փոքր Արմատանցի էր: Դեռ մանուկ՝ Պոլսի եկած ու Ղարսի մէջ Լուսաւորեան վարժարանը երեք տարի աշակերտելէ ետքը դարձած էր երկիրը ու ամուսնայած: Իր նիւթական վիճակը լուսնի էր ու Արիանեսաններէ ետքը՝ գրեթէ ինքն էր փոքր Արմատանի ամէնէն հարուստ անձը. 2—3000 ոսկիի հարստութիւն մը: Առանց յեղափոխական որ եւ է մարմնոյ մը հետ կապուելու կամ անոնցմէ ներշնչուելու, Հաճի Գալուստ եւ Բիւզանդ ֆափագեան կը սկսին կամայ կամայ խօսիլ կողմէ ու զինել, իրենց գրածով, յարմար առթիւ գործելու համար: Արիթը դեռ չի ներկայացած՝ անխուսափելի մատնութիւնը տեղի կունենայ: Չերթակալութիւնները կը սկսին եւ հազիւ Հաճի Գալուստ ու Պատուելին կը յաջողին փախչիլ ու լեռները ապաստանիլ, ուրիշ տաք տասնհինգ ընկերներով: Այն ատեն կը սկսի անհամեմատ կոխ մը այդ փոքր՝ այլ խիզախ խմբին ու տաճկական կառավարութեան միջեւ, կոխ որ ամբողջ երկու տարի կը տեւէ եւ որու միջոցին կառավարութիւնը 1500 հոգիէ կազմուած կոնստանուր բանակ մը կը ստիպուի զրկել Պատուելի ամիսները բնակիլ ընկելու համար:

Հաճի Գալուստ ու Պատուելին՝ հրացանը մեր հայրենի սարերու ժայռերուն կռիւնցուցած՝ կը դիմադրեն մինչեւ որ ժամ մը կը հասնի ուր Պատուելին ինք կարձակէ անձկութեան ազդանքը. —«Տղա՛ր փախի՛ր ու ինքզինքնիդ ազատեցէ՛ք»: Ամէնքը մէջ մէջ կ'ոգնէ կը սկսին ցրուիլ: Մէկ մասը կը բռնուի ու հազիւ երեք հոգի կրնան փախչիլ հաղարտոր դօր:

բերու և նոյնչափ զիրենք հալածելու եկող բնութիւնը օժանդակներու բազմութեան մէջէն:

Այդ ազատութիւնը մէկը կըլլայ Պատուելի Բիւրոյ փառաբանի որ կապաւորուած Յունաստան:

«Հրոստիսիոն» դատաւարները տեղի կունենայ երգնկայի մէջ ու Պատուելին ի բացակայութեան մահուան կը դատաւարտուի:

* * *

Ահա իր կեանքը, բանի մը բառով:

Յեղափոխական շարժումը մեր ազգին մէջ տեւական տեսակ տիպարներ երեւան բերաւ: Յետեւեւեւ երբեք մէկ անկիւնը նստած յեղափոխականներ որոնք իրենց հարստութիւնը չինեցին այդ գործով տեսանք հերոսներ՝ որոնք մատուցէին, տէրօրներ՝ որոնք աւագակ էին, գործիչներ՝ որոնք յեղափոխական եղան այնչափ ատեն որ իրենց շահը ու փառաւորութիւնը յազուրդ կը գտնար անոր մէջ և երբ աստիճան յոյսերին կտրեցին, դարձան նորէն թուրքին ստոր լզելու, տեսանք արձաւաններու զգուշի ու պոռոտախօս յեղափոխականը, տեսանք զգուշորոյն, յաջողկոտ ու անբարոյական յեղափոխականը ու մեր յափշտակութիւնը սառեցաւ ու սիրտ խառնուրդ եկաւ մինչեւ կոկորդիս . . .

Բարեբախտաբար անոնց բով երեւցան նաեւ Պատուելին պէս մաքուր յեղափոխականներ, որ իրենց անձնութեամբ, զոհաբերութեամբ ու բնութեան անբոյժ կեանքով փրկեցին ազատագրական շարժումին պատիւը և զգայունքին մեզի որ պէտք էր ամենքը մէկ ջրով լուալ:

* * *

Ինչո՞ք Պատուելի, երբ զինքը ճանչցայ՝ արդէն մեռնիլ սկսած էր:

Կինը, պառաւ մամը ու երկու գաւառներ աննեցուկ ձգած, ստոյգումը զբաղուած, իր ամբողջ յոյսերուն ջանքով տեսած, լքուած, թշուառութեան, անստուգութեան մատնուած՝ այդ մարդը ամէն օր կը մեռնէր կտոր կտոր: Իր փախստականի աստանդական կեանքը զինքը նետած էր Աթէնք, յետոյ Եգիպտոս, յետոյ Ռուսաստան ու յետոյ Կիւն Յունաստան, ուր զինքը ճանչցած ատեն Բիւրոյի մէջ պաշտպան կը ծախէր փողոցները: Անցած տարի ղեկավարեցին, եկաւ նորէն Եգիպտոս՝ ուր վերջերս խանութ մը բացած էր Պազար Մուրուրի մէջ ուր խաչուէ ու լիմոնատ կը ծախէր և կօշիկի համար խաւարարտէ տուփեր կը շինէր:

Ու ահա անցած օր իմացայ որ թանջքէ մեռեր է, հիւանդութիւն գոր առած էր երկու տարուան ասպատակային կեանքի միջոցին և զոր չէր կրցած պէտք եղածին պէս խնամել:

Ահ, այդ մարդը որ սահմանուած էր իր հոյրենիքի մէկ սարին կռակը, գնտակներու տարափի մը տակ ինչպէս, այսպէս ողորմելի կերպով մեռաւ Ափրիկէի մէկ անկիւնը, խեղճուկ խշտեկի մը վրայ . . .

Հաւատքի ու հոյրենիքի, այդ երկու մեծ ցորթներու զոհ, խեղճ Բիւրոյի փառաբան խղի խայթ մըն ալ ունէր մինչեւ վերջը. սխալ մը գործած ըլլալու խղի խայթը:

—Ի՞նչ ոգուտ հղաւ մեր ըրածներէն, ընդհակառակը վնաս բերինք մեր ազգին գլխուն, կըսէր յաճախ:

Ու այս մտածումը կը կրծէր իր հալուած էութիւնը:

* * *

Չէ՛, Պատուելի, հանգիստ քնացիր փոսիւք մէջ, Երբոր պատերազմը պատերազմեցար դուն: Վերջին Դատաստանին՝ որուն կը հաւատայիր, եթէ բեզ չգտնեն Վարդանանց հազար երեսունը վկաններուն մէջ, և՛ս պիտի ըլլամ՝ բողոքող:

Հոգ չէ եթէ ասոր համար դժոխք ալ երթամ: Ե. Օ.

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

Ազատ երկիրներու մէջ հրահրակոյի սկսող ազգային քերթերու թիւը երբայով չէ շահնայ. անխառն պիտի ըլլար ընթեր-

ցաւերներու հանդիմն էր քիսակին հետ որակն աշխարհաւար. աշխարհի ամեն կողմը տարեղան, գաղթական հայութիւնը աշխարհաւարական պաշարին շահ պէտք ունի իր հոգեկան ցաւերուն տիպարակ մը մոռացում գտնելու համար: Ամեն ասեկէ տեղի հիմակ է որ յազիրը պարզ ժամանց մը ըլլալէ կը դարձի մեզի համար. առաջնորդի, խորհրդականի, իրողութիւններն իրենց սխուր մեղկութեան մէջ ցուցադրողի ծանր հոգն ունի ան իր վրայ. փոքր չէ թէ մեկը պիտի մոռնա, ուրիշ մը պատահի կրէ. ամեն հրապարակագրի պատհան է իր կարողութեան չափով աշխատիլ՝ վերջապէս դարձնել հետ վանելու համար ինքնախաբոքութեան շրջանը որ այնքան սուղի լուսաւ ազգին գլխուն:

Ի՞նչ մը ծիծաղ, ի՞նչ մը գրականութիւն, ի՞նչ մը սրտաւարութիւն, որ յազիրութեան համար-հոսք կը կազմեն, չեն ազգիւր թնաւ որ անկեղծ ու համարձակ ըլլան մեր գրեցիկներուն մէջ: Ժողովուրդը չէ որ յազիրն ուղղութիւն պիտի տայ, այլ երկրորդը առաջինն. քունքեր, պատահներ, հասկնալներ կը գտնեն օրագրողը շատ անգամ իր առջեւ. պէտք է մաքառիլ գիտնալ:

Մեծ ու պզտիկ, հին ու նոր քոյր քերթերը որոնք կը յաջորդեն իրար, գրաւորութեան ճնշումներէն զերծ միջավայրերու մէջ, այս հաւաստի, այս սկզբունքը դաւանելով է որ կրնան իրական օգուտ մը մատուցանել. գտնէ այս ուղղութեան մէջ համարաշխ ըլլանք:

Հայքէն ետք, որ եօթը տարիէ հետեւ կը հրահրակոյի ի նիստով, մեղիկայի հայերը կ'օժտուին նոր քերթով մը՝ Տիգրիս՝ որուն առաջին երկու թիւերն ստացանք: Յաջորդութեան ու յարաւերութեան խղճերով կողջունելով իր երեսունը:

Մեր յազիրական աշխարհին նորագոյն շրջան է նոր Կեանքին երեսունն ի Լոնտոն, տարեգլխուն: Իր յայտագրէն դասելով ու ծանօթ գրագէտներու խմբագրութեամբ, տարակոյս չունիմք որ այդ ազգային, գրական ու ֆաղափական կիսամեծաշխարհային կարեւոր տեղ մը պիտի թռնէ հայ մամուլին մէջ, մեծապէս գնահատելով ամեն հայաբնակ կեդրոններու մէջ:

Բարեգի մէջ ալ, հայ ուսանողները ազգ. քերթ մը հրահրակելով պիտի ձեռնարկեն, կրտսի: Թեւեւ յայտագիր ու խղճագիր տակաւին մեզ անծանօթ, քայքայ ոչ նուազ քաղաքացի ենք անոր երեսունն ու յաջորդութեան:

En avant!

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Մեծ Տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպանները բերանացի կերպով ազգութեան յիշեցուցեր են Դրան՝ իրենց նախապէս տուած ծանուցագրերը որով դրամական հատուցում կը պահանջէին Կ. Պոլսոյ ու Անատոլիոյ անցեալ տարուան շփոթութեանց միջոցին իրենց հպատակներուն կրած վնասներուն համար: Կառավարիչն որ խառն յանձնաժողով մը կազմուի քննութիւն կատարելու: Դեսպանները

ըր կը շեշտեն այն պատասխանատուութիւնը որ կը ծանրանայ օսմանեան իշխանութիւններուն վրայ շարքերուն պատճառաւ և կը յայտարարեն թէ Դուռը չի կրնար այլեւս ձգել իրենց պահանջներուն նկատառումը:

Իտալական դեսպանը մասնաւորապէս գումար մը կը պահանջէ Անճէլիս ընտանիքին համար որուն տղան սպաննուեր է եղբոր փողոցին մէջ: Պրանսական դեսպանն ալ նոյն պահանջումը կընէ հայր Սարգիս Թորէի համար որ սպաննուեցաւ Մարաշի մօտերը:

—Կ. Պոլսոյ առաջին դեսպանատան առաջին թարգման Չէրպաչէֆի կոմսը որ Թեւալայի գաղթականներու վերադարձին հրապարակաւ յանձնաժողովին անդամներէն մէկն է, անցեալ շաբաթ օր յարձակում կրեր է մուրացկաններէ (՝) Կոմսը կրցածին չափ պաշտպաններ է ինքզինքը, բունցքի հարուած մը իջեցունելով թուր սպայի մը երեսին, որ անմիջապէս զինքը բռնել ու ձեռքբերել կապել տուեր է: Յանձնաժողովին Փրանսացի, անգլիացի ու իտալացի պատուիրակներն այս դէպքն իմանալով՝ տեղեկութիւն տուեր են Ռուսիոյ հիւպատոսական գործակալին, որ անձամբ եկեր կարտեր է չունեներ. այն ատեն, պալատական թիկնապահ մը վրայ հասնելով, Կ. Չէրպաչէֆի ձեռքակալումը պահանջել է: Վերջապէս Վոյնի զինուորական հրամանատար Էնլէր փաշա գալով, ինք անձամբ իր տեղը առաջնորդեր է կոմսը որուն ընկերացիներ են նաեւ իր պաշտօնակիցներ:

—Վաշինկթընի օամ: Նախորդ դեսպան Մալթոյէնի պէյ Պրիւսէի դեսպան անուանուեր է Դարաթէստորի էֆէնտի տեղ որ 22 տարիէ հետեւ այդ պաշտօնին մէջ կը գտնուէր:

—Տէյի Թէյէկրաւէին ուղղուած հեռագրի մը նայելով, Պարսկի նահանգին մէջ շփոթութիւններ ծագեր են:

—Նոյեմբեր 30ի դեսպանական գումարման մէջ, ի Կ. Պոլսոյ, Ռուսիոյ ներկայացուցիչը երեք նոր ընտրելիներ առաջարկել է Կրէտէի կառավարութեան պաշտօնին համար, որոնց երկուքը օամ: Հպատակ յոյն և մէկը Դարաթաղցի իշխան մը: Դեսպանները մերժել են առաջին երկուքը, յառաջիկային վերապահելով երրորդին վրայ մտածել:

Այս ընթացքով, չի պիտի զարմանանք եթէ օրին մէկն ալ կարգանք որ Պէշիկ-Թաշի կամ Ֆէնէրի դպրոցին կառավարիչը առաջարկուեր է, հարկերը ընտրելին ըլլալով, երբ իշխանական ցեղի թափփուրներու ցուցակն սպառի:

—Թայմզ կիմանայ թէ Յունաստանի ելմական նախարար Պ. Սթրէյթ եւրոպական պատուիրակներուն ներկայացուցիչ է քննարկի բարեփոխեալ նոր ծրագիր մը որ ընդունուեր է: Պ. Սթրէյթ այդ ծրագրի հիման վրայ պիտի պատրաստէ օրինական ծրագիր մը խորհրդարանին ներկայացունելու համար:

ՕՐԱՑՈՅՑ

1898 թ ՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փառ ողջ:

ԻՆՉՊԷՍ ԿԵ ԿԱՐԴԱՆ

“ԲԱԲԱԿԱՆԼՈՒՆ

Խանութ մը ուր կ'ստանան Բարսիկային՝ Խոզի մարդոց յատուկ Թրեյսային սխրեմով խմբագրուած այդ գոեհիկ բերքը:

Յրուիչը շնորհակալութեամբ կը խոստէ եւ սեղանին վրայ նետելով կը հեռանայ:

Տասը հոգի վրան կը ժողովին եւ խորհրդաւ ծուրխնները կ'սկսին:

Մտիկ ընենք:

Գրիգոր.— Ինկիլիզը նայէ՛, ծօ՛, Ինկիլիզը. աշկը սիրեմ:

Սարգիս.— Գահայէ՛ Մոսկովի, նայէ՛ նստել խուրովից կըլլայ կոր: Յորանորդը պօշին թափելէ ետքը, ուզած տեղը կը տանի կոր:

Մկրտիչ.— Մերկնքինն ալ եանէ եկեր, նարկիւն կը բռնէ կոր:

Սեփոն.— Ծօ՛ սողաք, հայերուն համար սրան չի կայ:

Գրիգոր.— Նստել չի կայ. Խփէրիմ Բաբաղալլօ, մեզի տէ՛յ լէրը տրեք է: Հոռովին թափաւորը նայէ՛ նստել քնօշէ մը բաշկեր կուլայ կոր. կեցցէ՛ հայերը: Թէվէթէլի չէ քի հայերը տասնի բարձր դրեր է, հէյպիթ պան մը կայ ատոր տակը:

Սարգիս.— Ձախը տխրաթ չընեն, Ինկիլիզը պապարտի պէս մեր քովն է կեցեր:

Սեփոն.— Թախանը տէ՛յ էտին է միայն:

Մկրտիչ.— Կէնէ պան մը կը տասնայ կոր. Բաբաղալլօն թէվէթէլի չի գրեր:

Սարգիս.— Մէկախօր Միրանը Փարոսը կարգաց տէ ըսաւ բի. . .

Սեփոն.— Ծօ՛ Փարոսը տէ՛յ ըրէ, բոլիթիքային ինչ կը հասկնայ: Աս Բաբաղալլօն թիթիւն բոլիթիքայի պաները գիտէ. Կլատովին, Պիգմալիոն պէս մարդեր են հէյպիթ ան գրողները, չի նայիս, առտուան մը ըլլալիքը մէկ պարկէնով կը հասկնեն կոր աս շունչանորդի կ'ազէթան. կէս ֆրանք է ամսա, հէյալ ըլլայ:

Եւ ամենքը միասին Տաւրիկը սուլելով իրար մէ կը զատուին:

ՌԱՏԱՄԷՍ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Գահիրէի կառավարիչ Մահմէտ փաշա հինգ-չարթի առաւօտ Առաջնորդարան եկաւ ի փոխադարձ այցելութիւն Առաջն. Տեղապահ Տ. Յակոբ Մ. վարդապետի որ երկուշաբթի օրը այցելութիւն տուած էր Մուհամմէտ Առաջնորդարանի արարեղէնի քարտուղար Իպրահիմ էֆէնտիի հետ, իբրեւ թարգման: Ուրբաթ օրն ալ կառավարիչ փոխանորդ Մուսթաֆա պէյ եկաւ Առաջնորդարան:

Տեղապահ Հայրն հինգշաբթի օրը Տ. Մամբրէ քահանային ու Իպրահիմ էֆէնտիի հետ հայ հոռովականաց առաջնորդարանը երթալով այցելութիւն տուաւ Տ. Բառնաբաս եպիսկոպոս Ազգէհիրլեանին: Տեսակցութիւնն յոյժ սիրալիր եղաւ ու տեւեց երեք քարորդ-ժամ:

Նոյնպէս այցելութիւն տուաւ Աղեքսանդրիոյ յոյն Պատրիարք Տ. Սօֆրոնիոսի որ օգտփոխութեան համար Գահիրէ եկած է: Այս անգամ Տ. Յակոբ վարդապետին կընկերանար Տ. Կարապետ Ա. քահանայ որ երեսուն տարուան ծանօթութիւն ունի հարիւրամեայ Պատրիարքին հետ: Հոն ալ նոյն սիրալիր ընդունելութիւնն ու մտերմական տեսակցութիւնը:

Տ Ե Ղ Ա. Կ Ա Ն

Բարձր. Խտիվը հինգշաբթի առաւօտ Ապտինի պալատին մէջ յաջորդաբար ընդունեց սէրտար Գիշնէր փաշան եւ առողջապահական ընդհ. տնօրէն Ռօճրուս փաշան:

Ն. Բարձրութիւն նոյն օրը Ա. Գիշնէրի գնացիւ իր վախճանէալ հօր Թէվֆիգ փաշայի ու նախաձայրերուն դամբարաններն այցելելու: Հաւանաբար այս իրիկուն Մոնթազահ պիտի ուղեորի, երկու-երեք օր մնալու:

Նախարարաց խորհուրդը վաղը կը գումարուի ներքին գործոց պաշտօնատան մէջ, նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշայի նախագահութեամբ:

Թէեւ Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ հաշտութեան պայմանագիրն ստորագրուեցաւ, սակայն Աղեքսանդրիոյ ու Գահիրէի հեղինական հիւպատոսարանք տակաւին չեն զետեղած իրենց զինանշանը եւ հաւանաբար երկու երեք ամիսէն առաջ չի կատարուի այս գործողութիւն: Պատճառն այն է որ հիւպատոսական նոր դաշնագրի մը կնքման համար բանակցութիւնք սկսած են երկու պատերազմիկ կողմերուն միջեւ, որուն աւարտումէն ետք միայն հեղինակ հիւպատոսարանք պիտի կրնան վերսկսիլ իրենց դիւանագիտական յարաբերութիւնները եգիպտական կառավարութեան հետ:

Տեղական Պաշիւ լրագիրը խիստ յօդուած մը հրատարակած է՝ Գահիրէի մէջ ու Եգիպտոսի ամեն կողմը վիստացող խաղարաններուն դէմ: Կառավարութիւնը գիտէ թէ, կըսէ, այդ տուններու գոյութիւնը ինչ մեծ վնաս կը հասցունէ ժողովուրդին, եւ սակայն ձեռքերը ծալած կը մնայ, առանց շարժելու: Եթէ այսօր քայլ մը առնէ անոնց բարձման համար, վաղը կընկրկի:

Գահիրէի ստորականութիւնն առջի օրը Մուսթի մէջ ձերբակալեց Մուհամմէտ Իսրիս անուն մարդը որուն վրայ կասկած կայ թէ Պառ Մատակապարի վերնայարկը հինգ-վեց ամիս առաջ խղզուած Ալէքսանդրիոյ սպաննիչներէն եղած ըլլայ: Մուհամմէտ Իսրիս ուրացաւ եւ բողբոջեց, բայց Ահմէտ Իսրիս անուն ուրիշ ալճէրիացիի մը անունը տուաւ իբրեւ մեղապիկ այդ ոճրին:

Խտիվին եւրոպական դիւանին պետ ֆրանսացի Ռուլեյէ պէյ որ քանի մը ամիս հետէ հիւանդ էր, մեռաւ հինգշաբթի գիշեր եւ յուղարկաւ Եգիպտոսի կառավարութեան երէկ:

Եգիպտական երկաթուղեաց վարչութեան նախագահ Պ. Բուպթրիսին այսօր Եւրոպա կուղեւորի: Իր բացակայութիւնը պիտի աւել մէկ ամիս:

«Բէնինսիւլէր» ընկերութեան Գլխաւոր ղեկավարը որ Մարսիլիայէն մեկնած էր անցեալ շաբթու, Լիոնի ծոցին մէջ բռնուի փոթորիկի մը բռնուելով՝ երկու օրուան յապաղումէ մը ետք այս հինգշաբթի առաւօտ միայն հասեր է Մալթա, զէկը կոտրած, առաջատները պատառուէն. ուղեւորները մահուան վտանգ անցուցեր են 48 ժամ: Գլխաւոր Մալթայէն ճամբայ ելած է ու Աղեքսանդրիոյ նահանգիստը կը սպասուի վաղն առաւօտ:

— Էյ Ահրաւ կը քննադատէ եգիպտական երկաթուղեաց վարչութեան այն որոշումը որուն համեմատ երթեւեկի զեղչեալ գնով տոմսերու գրութիւնը շնչուեցաւ: Այս պատճառաւ թէ երկաթուղիներու հասոյթը պիտի նուազի, կըսէ արար թերթը, քանի որ պարզ տոմսերու գինը բարձրացած է, եւ թէ՛ հասարակութիւնը պիտի նեղուի ու վնասուի:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 10 Դեկտեմբեր.— Առաջին Ռիպէր կը մանայ Բեդրասուրկէ թէ Ռուսիոյ տարական նահանգներուն մէջ տագնապալի գրգռում մը կը տիրէ եւ թէ կը վախցուի որ ապստամբութիւն մը ծագի Կովկասի մէջ:

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՇԵՏԵԱՆՔ

Քաղաքակրթութիւն մը՝ որուն գերագոյն յատկանիշն է անձնասպանութիւններու բազմապատկութիւնը, արժանի՞ է արդեօք քաղաքակրթութիւն կոչուելու: Աւելի երեւակայական քաղաքակրթութիւն մը չէ՞ այն՝ որ յուռալքիմութեան պատրուակին եւ պերճանքի նրբութեան ետեւ կը պահէ իրական բարբառութիւն մը:

«Քաղաքակրթութիւն եւ անձնասպանութիւն» վերնագրով Նօրթի Ամերիկիոյ Ռիպլիի մէջ յօդուած մը կը տեսնենք, որուն մէջ ջանքեր եղած են ապացուցանելու համար թէ քաղաքակրթութիւնը որքան առաջ կ'երթայ անձնասպանութիւնը այնքան կ'աւելնայ:

Լուսաւորեալ Եւրոպայի մէջ տարին 60,000 անձնասպանութեան դէպքեր տեղի կ'ունենան, թիւ մը որ հազիւ կէսը կը ներկայացնէ այդ դարավերջի ախտին զոհ գացողներուն, եթէ ի նկատի առնուի թէ շատ մը ընտանիքներ եւ բարեկամներ մէջտեղ չեն հաներ մահու այդ դէպքերը որոնք պարզապէս անձնասպանութիւններու շարքին մէջ կրնան դրուիլ:

Տասնըիններորդ դարուն մէջ անձնասպանութիւնը զգալապէս աւելցած է եւ իր խօշ ընթացքին մէջ, աշխարհիս բնակիչներուն բազմամարդութեան եւ բնական մահուան միջին թիւէն շատ աւելի բարձր է անոր թիւը: Այն երկրին մէջ ուր քաղաքակրթութիւնը կը յառաջդիմէ, աւելի բազմաթիւ են այն կիները եւ երիկ մարդիկ որ անտանելի գտնուելով կեանքի բեռը կ'ամովին իրենք զիրենք կոչնչացնեն: Կարծելու չէ թէ աղքատ եւ բանտ դատաւար գին մէջն է որ ինքնասպանութիւնը աւելի շատ անարգէտներ ունի: Ծիծղը հակառակն է: Ինքնասպանութեան ոճիրը խելացի եւ զարգացած մարդու գործ է ընդհանրապէս եւ շատ անգամ ալ հարուստի:

Տղթ. Ուիլիէմ Մաթիուս, յիշեալ յօդուածին հեղինակը, երկար ցանկ մը կ'ուտայ ինքնասպան եղող շատ մը պատմական նշանաւոր անձերու, որուն մէջ կը գտնենք անունները Տէմոսթէնէսի, Արիստոտելի, Ջենոնի, Թէմիստոկլէսի, Բէթրոնի, Կատանի, Պրիւթիւսի, Սենեկայի, Անիպալի եւ ուրիշ շատերու ինչպէս նաեւ ժամանակակից անուններէն՝ Շաթլըրթոն, Բրէվօ-Բարաուօլ, Հ. Պ. Վալաս եւ վերջերս Պարնաթօ, նշանաւորագոյնները յիշելու համար միայն:

Ինքնասպանութեան շարժառիթները

տարբեր տարբեր են, բայց զխառնուրդն են ժառանգականութիւն և աւելումութիւն :

Մտաւորական չափազանց աշխատութիւնն ալ ինքնասպանութեան երրորդ շարժառիթն է : Արհեստներու մէջ մեր յառաջացումը, շուգեղանք մեքենաները, երկաթուղիները, լրագիրները, հեռագիրները և հեռաձայնները մեր խեղճ մարդկութեան ջիղերը քայքայելու մէջ մէկ պատճառներ են :

Հին ատենները կենսապայքարը բազուկներու պէճն կախում ունէր և յաղթութիւնը զօրաւոր մկանուններն ունեցողին կը մնար : Բայց այսօր պայքարը մոքով կը կատարուի և երբ խեղճ իր հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ, ուրիշ բան չի տեսներ իր դէմ ըստը եթէ ինքնասպանութիւնը՝ իբրեւ ամենապարզ և ամենաքնական լուծում մը իր տարաբաղդ վիճակին :

Վէպերի, տաղանդաւոր երգահանին յուսահատ ճիւղ չէ՞ք յեշեր :

— Դերձակ մը ըլլալ կուզէի, գոնէ կիրակի մը ունենալու համար :

Գանինէր նախապատիւ սեպած են իրենց կեանքին վերջ տալ քան թէ ատկալ մը տային չարաչար աշխատութեան մը՝ որ քիչ անգամ կը կերակրէ :

Հրատարակուած վիճակագրութիւններէ կը տեսնենք թէ երկիրներ կան որ մասնաւորապէս արդաստարներ են ինքնասպանութեան տեսակէտով : Նոյն իսկ երկրի մը մէջ գաւառներ կան որ ուրիշ տարբեր գաւառներէ աւելի անձնասպաններ կարտադրեն :

Եւրոպայի ամենէնուաղքաղաքակրթուած երկիրները, Սպանիան, Բօրնիոյ և Իռլանտան, օրինակի համար, ամենէն քիչ անձնասպանները կարտադրեն :

Ընդհակառակը, Գերմանիա առաջինն է այն երկիրներուն ուր ամենէն շատ դէպքեր կան ինքնաոչնչութեան : անկէ ետքը կուգայ Ֆրանսա և յետոյ Անգլիա :

Ամիսները ոչ նուազ ազդեցութիւն ունին հաւասարակշռութիւնը կորսնցնող խելապատակներուն վրայ : Յունիսի մէջ ամենէն շատ և դեկտեմբերի մէջ ամենէն քիչ անձնասպանութեան դէպքեր կը պատահին :

Նոյն իսկ շարժումն մէջ — ուշագրաւ պարագայ մըն է ասիկա — երկուշաբթին, երեքշաբթին և հինգշաբթին — Փարիսի համար վախ չկայ — ամենէն աւելի յարմար դատուած օրերն են ինքնասպանութեան :

Գերմանական ցեղը ամենէն շատ ճգնտուած ունեցողն է դէպի անձնասպանութիւն և սլաւ ցեղը շատ հակում չունի իր նւը ոչնչացնելու :

Վերջապէս — կը յաւելու, Տօթ. Ուիլեյմ Մաթիլու — իբրեւ կանոն ընդունելու է թէ ժողովրդեան մը զարգացման աստիճանը՝ իր մէջ գտնուած անձնասպաններու թիւէն կախում ունի :

Ամերիկացի բժշկին յօդուածին այս վերջի մասը շատ ճիշդ ըլլալ կը թուի մեզի, որովհետեւ երբ նկատի կառնենք մեր ծննդավայրը, կը տեսնենք թէ անոր տէրերը իրաւ ոչ-զարգացած ցեղի մը կը պատկանին, որովհետեւ փոխանակ իրենք զիրենք սպաննելու... ուրիշները կը ջարդեն :

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիթներ : Թաւր հաճախից ջուրեր, անուահոսութիւնք եւն. Բնալուծական և մանրադիտական քննութիւնք : Դեղարանը կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողները :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք ազատաց համար : 9—50

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱԿԻՋԷԼԵԱՆ

Ա. Ղ. Ե. Ք. ՍԱՆ ԴՐԻՍ

Կը մասակարարէ ամեն սեռակ ածուխ, մանաւանդ ՔԱՐԵՕԹ, անմրցելի գներով և զոհացուցիչ պայմաններով :

Դիմել ի Սիֆիլի Կեսիսա եւ կամ Հայոց Եկեղեցիին՝ Աղեքսանդրիս : 4—5

ՏՕՔԹՕՐ Ո. ՄՕՐՈՒՇ, վրայեալ Վիլնայի բժշկական Համալսարանէն ուր աշակերտած է բրոֆէսոր Պիլլուսի և Կոթնակէլի, և որուն մասնագիտութիւններն են՝ ներքին հիւանդութիւններ, վիրաբուժութիւն և կանացի ակտերու բուժում, հաստատուած է ի Գահիրէ : Կը գտնուի ամեն առաւօտ ժամ 10էն 11 «Գրուա Սիւխ» դեղարանը, Քուբի գործակալութեան կից, և ժամ 11էն 12 Պ. Աւագեանի դեղարանը : Իսկ կէսօրէ ետք ժամ 2էն 4 1/2 հիւանդ կընդունի իր տունը Շարա Ապտէլ-Աղիլ, թիւ 28 : 2—4



ՃԵՐՄԱԿԷԼԷՆ ԵՒ ԱՅԼԵՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Յ Է Բ

ԼԷՍՍԵՎՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախքի եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքուրեան կատարեալագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — ձեւակերպութիւն եւ այլոց հակաճեղքում :

ԿԱՐԵԻՐ. ԼԵՍՍԻՅՍԻՆ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՅՆԵՐ

Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆրիսարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի :

Միակ ցերեկայացուցիչ յեղիպոս

Կ. Վ. Ե. ԱՒԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դ. սիմի. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 17—24

Le Gérant: D. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՅ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Ժամ. 1,2,3,4	Օր. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օր. 1,2,3,4	Երբ. 1, 2 կգ.	Օր. 1,2,3,4	Երբ. 1, 2 կգ.	Օր. 1,2,3,4	
								1 2 3	Կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	երեկ. 1 —	9 40	8 7	—

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Ժամ. 1,2,3,4	Օր. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օր. 1,2,3,4	Երբ. 1, 2 կգ.	Ժամ. 1,2,3,4	Երբ. 1, 2 կգ.	Օր. 1,2,3,4	
								1 2 3	Կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	երեկ. 4 13	5 15	8 6
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	երեկ. 12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		Երեկ. 1 20	7 5	
Ջակաղիկ }	ժամ.	1 34	8 54	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա }	մեկ.	3 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	9 4
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Գահիրէ	ժամ.	5 5	10 35
Տօթ (բարափ)	ժամ.	6 55	—				